«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ»

ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ
ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ
ԴԱՍԸՆԹԱՑ 2022

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ - ԴԵՐԵՆԻԿ ԴԵՄԻՐՃՅԱՆԻ<< ԱՎԵԼՈՐԴԸ>>
ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԱՐԺԵՔԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ
ՁԵԱՎՈՐՄԱՆ ՄԻՋՈՑ

ԱՌԱՐԿԱ - ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ՀԵՂԻՆԱԿ ՄԱՐԻԱ ՂՈՒԿԱՍՅԱՆ

ՄԱՐԶ ԱՐՄԱՎԻՐ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ << ՁՐԱՐԲԻԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ>>

ՊՈԱԿ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ---------- 3

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

1.1 Դերենիկ Դեմիրճյանի<< Ավելորդը>> պատմվածքի սյուժեն և գաղափարը -----5

1.2 Նպաստել իրավահավասարության, մարդասիրության և արդարության մթնոլորտի ձևավորմանը դասապրոցեսում---------- -9

1.3 Հաճի աղայի կերպարի հոգեբանական զարգացումը ստեղծագործության սկզբում, մեջտեղում, վերջում ----------14

1.4. Սրբունի կերպարի վերլուծություն----------16

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

2. 1. Սովորողների արժեքային համակարգի ձևավորումը դասապրոցեսում---------19

2.2 . Հաշմանդամության խնդիր ունեցող հայտնիները----------22

2. 3. Հետազոտության արդյունքների վերլուծություն ----------26

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ---------- 29

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ ---------- 32

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Մի՛ ամաչիր բարի ու քնքուշ լինել…

Վիլյամ Սարոյան «Քո կյանքի ժամերը»

Մարդը ծնվում է,ապրում,արարում և հրաժեշտ տալիս կյանքին:Կան մարդիկ,որ այդպես էլ չեն հասկանում իրենց կյանքի առաքելությունը և միայն կյանքի մայրամուտին վերարժևորելով իրենց ունեցածը՝ հասկանում են,թե ինչեր կարող էին անել,բայց չարեցին:Ցավոք, ժամանակը հետ տալ հնարավոր չէ և կյանքի ամեն մի վայրկյանը պետք է կարողանալ ապրել գիտակցված՝մաքուր խղճով…

Հետազոտության թեման ,որը ես ընտրել եմ,միայն անձի ավելորդության գաղափարը չէ,սա հայրենազրկման գաղափարն է,իրական ու կեղծ արժեքներն իրարից չտարբերելը,դժբախտության պահին ճիշտ ընտրություն կատարելու ունակությունից զրկվելը: Պատմվածքն այն մարդկանց մասին է,ովքեր ամեն ինչից վեր են դասում իրենց հարստությունն ու սեփական կյանքը:

Իսկ ինչ ենք հասկանում արժեքներ ասելով.արժեքներն ընդհանուր համոզմունքներ են, որ անհատն ունի այն ցանկալի նպատակների վերաբերյալ,որոնց պետք է ձգտել կյանքում:Դրանք գործողության շարժառիթ են
և նաև ծառայում են որպես ուղենիշային սկզբունքներ՝ որոշելիս, թե ինչպես գործել:

Արժեքներն ավելին են, քան կոնկրետ գործողությունները և համատեքստերը, և դրանք ունեն նորմատիվ հրահանգավորման բնույթ՝ ներկայացնելով, թե ինչ է պետք անել

կամ մտածել բազմաթիվ տարբեր իրավիճակներում:
Արժեքները չափանիշներ կամ չափորոշիչներ են առաջարկում՝ թե՛ սեփական անձի, և թե՛ այլոց գործողությունները գնահատելու, կարծիքները, մոտեցումներն ու

վարքը հիմնավորելու, այլընտրանքներից որևէ մեկն ընտրելու, վարքագիծը պլանավորելով և այլոց վրա ազդել փորձելու համար:

Ըստ իս **թեման արդիական է**,քանի որ.

- Յուրաքանչյուր մարդ արժեք է և կապ չունի նրա առողջական վիճակը,**Աստված բոլորին ստեղծել է հավասար:**

-Առանց բարոյական արժեքների մարդը չի կարող իրականացնել իր առաքելությունը այս կյանքում:Քրիստոնեական բարոյական արժեքները արդի **մարդասիրական** շարժումների և գործընթացների առանցքն են կազմում:

- Այսօր էլ աշխարհի բոլոր հատվածներում մարդիկ ստիպված են լինում լքելու իրենց տունը,իրենց հայրենիքը,քանի որ շարունակվում են պատերազմները,կոտորածները

Մարդը կյանքում դժվարությունների է բախվում,սակայն ամեն մեկը ունի դժվարությունները հաղթահարելու իր ռազմավարությունը: Ամենակարևորը կյանքի իմաստը գտնելն է և **երբեք չհուսահատվելը**, անկախ նրանից, թե ինչպիսի դժվարությունների ու խոչընդոտների կհանդիպենք:

-Մեր իրականության մեջ ցավոք դեռ չկա այն գիտակցությունը,որ բոլոր մարդիկ հավասար են. **Աստծու առաջ ավելորդ հոգի չկա. հոգին հոգի է:**

Հետազոտական աշխատանքում նաև անդրադառնալու եմ հաշմանդամության խնդիր ունեցող այն մարդկանց, ովքեր կարողացել են հաղթահարել դժվարությունները, հուսահատությունը, հավատալ սեփական ուժերին և դառնալ իսկապես երջանիկ:

Կարծում եմ մտքի լույսը, հոգու մաքրությունը,կամքի ուժը և արժեքները որպես ուղենիշ ունենալով՝մենք անհնարինը կդարձնենք հնարավոր:

Հետազոտման օբյեկտը՝ Դերենիկ Դեմիրճյանի<< Ավելորդը>> պատմվածքը

Հետազոտման առարկան՝ Սովորողների արժեքային համակարգի ձևավորումը

Հետազոտման նպատակը՝

-Խթանել ինքնուրույն մտածելու,կարծիք արտահայտելու և այն հիմնավորելու սովորողի կարողությունների զարգացումը

-Նպաստել սովորողների բարոյական դաստիարակությանը և արժեքային համակարգի ձևավորմանը

-Զարգացնել ինքնուրույն աշխատելու,համեմատելու,երևույթները գնահատելու կարողություններն ու հմտությունները

-Սահմանել ռազմավարություն

Հետազոտման խնդիրը՝

- **Սահմանել** ,թե ինչ է արժեքային համակարգը
- **Ընդգրկել** արժեքային համակարգը Դերենիկ Դեմիրճյանի<< Ավելորդը>> պատմվածքում
- **Վերլուծել** արժեքային համակարգի դերը սովորողի կյանքում
- **Արժևորել և գիտակցել** ժողովրդավարական մշակույթի ձևավորման արժեքների դերը առարկան ուսուցանելիս, արժեքն ու գիտակցումը փոխանցել սովորողին

Հետազոտման մեթոդները՝

ա) զրույց **բ)** հարցում **գ)** դիտարկում

Ակնկալվող արդյունքներ՝

-հանրակրթության մարդասիրական բնույթը, ազգային և համամարդկային արժեքների, մարդու կյանքի ու առողջության, անհատի ազատ և համակողմանի զարգացման առաջնայնությունը, քաղաքացիական գիտակցության կարևորումը

-անհատի և նրա իրավունքների ու ազատությունների նկատմամբ հարգանքը, արժանապատվությունը, հայրենասիրությունը, աշխատասիրությունը, պատասխանատվությունը, հանդուրժողականությունը

-Կիրառել ուսումնական գործունեության տարբեր տեսակներ, ուսուցման արդյունավետ մեթոդներ արժեքների և վերաբերմունքի ձևավորման նպատակով

-Նպաստել իրավահավասարության, մարդասիրության և արդարության մթնոլորտի ձևավորմանը դասապրոցեսում:

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

1.1 Դերենիկ Դեմիրճյանի<< Ավելորդը>> պատմվածքի սյուժեն և գաղափարը

Մինչ պատմվածքի սյուժեին անդրադառնալը հասկանանք ,թե ինչ իրադարձություն է ընկած պատմվածքի հիմքում: Հեղինակը այդ մասին ներկայացնում է պատմվածքի սկզբում. *<<Տասը տարի առաջ միայն՝ իր անդրանիկ որդուն թաղելիս, Հաճի աղան թույլ տվեց, որ իր կապույտ մահուդ շալվարի տոտերը ցեխոտվեն, և մեկ էլ այսօր, երբ իմացավ, որ թուրք զորքը ռուսներին նեղելով, հաղթական մոտենում է իրենց փոքրիկ սահմանամերձ քաղաքին>>: Շարունակելով պատմվածքը դարձյալ ներկայացնում է անցյալի դեպքերը*. << Դեկտեմբերի ցրտին Հաճի աղան դուրս եկողը չէր, այն էլ այս ցեխին, որ գոյացել էր սայլերի ու զորքի տակ կոխկրտած ձյունից՝ հակառակ, որ միշտ այս ամսին գետինը սառած էր լինում:Անհանգիստ էր վերի՞ն աստիճանի: Արդեն մի շաբաթ է, ականջին դիպել էր, որ թուրքը գալիս է:**Փորձված, կյանքի չար ու բարուն տեղյակ՝** Հաճի աղան, որ տեսել էր 1877 թվի ռուս-տաճկական պատերազմը, երբ թուրքը կարծես բնականորեն հաղթվում էր, այն Հաճի աղան, որ «քրդանոցներում ու թուրքանոցներում» զելվել, առևտուր էր արել և շատ անգամ էր ավազակների ձեռքից աղվեսի պես պոչը պրծացրել, նա լավ գիտեր, որ երբեք չեն սպասիր վտանգը գա ու փեշիցդ բռնի.— **պետք է ժամանակին որսալ խուսափելու անկրկնելի վայրկյանը>>:**

Ընթերցելով պատմվածքում ներկայացված իրադարձությունները՝ հասկանում ենք,որ 1914թվականի դեկտեմբերի 14-ին է տեղի ունեցել նկարագրածը,երբ *թուրքերը նեղում էին ռուս բանակին Սարիղամիշի ուղղությամբ,իսկ դեկտեմբերի 22-ին ջախջախիչ հարված հասցնում՝գերի վերցնելով մեծ քանակությամբ թուրք սպաների ,այդ թվում՝հարձակվող կորպուսի հրամանատար Իսխան փաշային:[1]

Իրադարձությունը մեզ հնարավորություն է տալիս տեսնելու անցյալը ,սակայն ցավոք,նման իրադարձությունները դեռ շարունակվում են և թվում է,թե ժամանակները փոխվել են ու **21-րդ դարում ամեն բան կարելի է ավելի խաղաղ ու մարդասիրական ճանապարհով լուծել:**

Այսօր էլ աշխարհի բոլոր հատվածներում մարդիկ ստիպված են լինում լքելու իրենց տունը,իրենց հայրենիքը,քանի որ շարունակվում են պատերազմները,կոտորածները և ի վերջո չարը բույն է դրել մարդկաց հոգիներում: Միանշանակ մենք մտել ենք այն փուլ, որտեղ արդեն տեղի է ունենում 21-րդ դարի պատերազմ, որը տեխնոլոգիաների վրա հիմնված պատերազմ է: **Զարգացած տեխնոլոգիայի դարաշրջանում՝մարդը մարդասեր չէ:**

[1] Հղում//https://grapaharan.org/Ավելորդը,*ծանոթագրությունը Ա.Ա.Բեժանյան*



Նյութականը վեր է ամենից ու ամեն ինչից:

Պատմվածքը մի ընտանիքի մասին է . ապրում էին Հաճի աղան և իր ընտանիքը՝ Հաճի մարը, Հաճի աղայի որդիները, հարսները, թոռները, Սրբունը՝ Ավելորդը: Երբ Հաճի աղայի քույրը՝ Սրբունը, որը կորցրել էր իր ամուսնուն, հիվանդանում է տիֆով և անդամալույծ է դառնում, Հաճի աղան նրան բերում է իր տուն և նրա համար անկյուն է հատկացնում, **որովհետև չի ուզում, որ Սրբունը բեռ դառնա ուրիշների ուսերին, և նրանք բողոքեն իրենից**: Բայց այդ անում է թերևս ոչ թե իր քրոջ, այլ իր **պատվի մասին մտածելով:** Նրանք ապրում էին մի քաղաքում, որտեղ լուր էր տարածվել, որ շուտով թուրքերը կհասնեին իրենց սահմանամերձ

քաղաքին, և Հաճի աղան որոշում է փրկել իր կարողությունը և իր ընտանիքի հետ հեռանալ քաղաքից:

Նրանք պատրաստվում էին արդեն գնալու, երբ նրա կինը՝ Հաճի մարը, լաց լինելով աղաչում էր Հաճի աղային, որ իրենց հետ տանեին անդամալույծին:Սակայն Հաճի աղան հրաժարվում էր վերցնել անդամալույծին՝ պատճառաբանելով, որ սայլի մեջ նրա համար տեղ չկա, քանի որ առանց այն էլ իրենք շատ իրեր են իրենց հետ վերցնում, և նրա փոխարեն կարելի է ավելի **օգտակար մի բան վերցնել**:

Վերջում Հաճի աղան **զղջում է իր արածի համար: Հաճի աղան ինքն իրեն չի ներում այդ արարքը, հոգեպես շատ է տանջվում, հասկանում է, որ աշխարհում գոյություն չունի ավելորդ մարդ :** Մահից առաջ «Ավելորդի» հիշատակի համար ոսկի է տալիս տերտերին՝ աղքատներին բաժանելու համար:

Ստեղծագործության գաղափարը յուրաքնչյուր մարդու կյանքի արժեքի,նրա կարևորության և ոչ մի դեպքում ավելորդ չլինելն է:Աստծո առաջ բոլորն էլ հավասար են՝անկախ դիրքից,ունեցվածքից և առավել ևս առողջական վիճակից: **Մարդը բարձրագույն արժեք է:**

-Նյութականը չնչին արժեք ունի մարդկային կյանքի դիմաց և առավել կարևոր է մարդկային փոխադարձ հարաբերությունները, ինչը, որ մեր հերոսը հասկացավ պատմվածքի վերջում, բայց ավաղ արդեն ամեն ինչ կորած էր:

1.2 Նպաստել իրավահավասարության, մարդասիրության և արդարության մթնոլորտի ձևավորմանը դասապրոցեսում

<< Մենք աշակերտներին չենք սովորեցնում, այլ ստեղծում ենք պայմաններ ,որում նրանք սովորում են>> Սամյուել Փեյփերթ

Յուրաքանչյուր դաս պետք է դաստիարակի իրավահավասարություն ,մարդասիրություն և արդարություն: ՈՒսուցիչը պետք է լինի կրողը այդ արժեքների,որպեսզի աշխատանքը արդյունք ունենա: Նա դպրոցում մարդասիրության սերմնացան է և իր օրինակով է բացահայտում և բացատրում մարդ լինելու կոչումն ու արվեստը: Դպրոց-միջավայր-ընտանիք կառույցը պետք է ամուր լինի ու փոխկապակցված: Աշակերտների նկարագրի հիմքը պիտի կառուցենք ժայռի վրա, որը, ինչպես մեր Տերը օրինակ բերեց, կանգուն է մնում հողմերի ու հորձանքների հանդիման, որպեսզի նրանք կարող լինեն դիմակայելու դժվարություններին և ունենան ներուժը արարելու, կյանքը բարեփոխելու և զարգացնելու:

Յուրաքանչյուր դասարանում գրականությունը ուսումնասիրելիս հասկանում ես,որ առանձնացվել են որոշակի թեմաներ, որոնք համապատասխանում են տարիքային տվյալ խմբի հետաքրքրություններին, առանձնահատկություններին և պահանջներին:

Սեփական անձի ինքնաճանաչողության, ինչպես նաև աշխարհաճանաչողության համար ծանրակշիռ դեր ունի գրականության ուսումնասիրությունը,որը հնարավորություն է տալիս սեփական անձը, աշխարհը ճանաչելու, մարդկանց հարաբերությունները վերլուծելու և արժևորելու, հոգատար և կարեկից վերաբերմունք դրսևորելու սեփական անձի, մտերիմների, շրջապատի մարդկանց նկատմամբ:

Ցանկացած թեմա ուսումնասիրելիս ուսուցիչը պետք է նպաստի իրավահավասարության, մարդասիրության և արդարության մթնոլորտի ձևավորմանը դասապրոցեսում:

Իսկ ի՞նչ է մարդասիրությունը ,իրավահավասարությունը և արդարությունը: ***«Մարդասիրություն»** հասկացությունը հունական լեզվից թարգմանաբար նշանակում է **սեր դեպի մարդիկ**: Մ.թ.ա. 5-րդ դարում այն նշանակում էր աստվածահաճություն, իսկ մեր թվարկության 5-րդ դարում՝ բարեկամական վերաբերմունք մարդու հանդեպ: Ներկայիս փուլում «մարդասիրություն» հասկացությունը սկսել է ակտիվորեն օգտագործվել Ֆրանսիայում, որից էլ փոխառված է մեր խոսքի մեջ:

Հիսուսը մարդասիրության վառ օրինակ է և դասապրոցեսում անպայման պետք է անդրադառնալ նրա կերպարին **:**Հիսուսն արձագանքում էր մարդկանց, թույլ տալիս Իրեն շահարկել, հանդուրժող էր նրանց արարքների նկատմամբ ու համբերատար: Նա մարդկային էր, եւ դրա համար մարդիկ Նրան պաշտում էին: Հին Ուխտում Աստված Իր մասին հռչակեց, որ մարդասեր է եւ ողորմած, երկայնամիտ ու բազմողորմ (Թվոց 34. 6):

Հղում// https://www.wikiwand.com/hy/

Մարդ եղե՛ք բարի խոսքով, մարդ եղե՛ք լավ արարքով, օրինակելի վարքով:

***Իրավահավասարություն**, քաղաքացիների հավասարությունը պետության, օրենքի և դատարանի առաջ: Համարվում է ժողովրդավարության էական տարրերից. առաջ է քաշվել հակաավատատիրական հեղափոխությունների շրջանում՝ դասային հարաբերությունների արդիականացման նպատակով: Իրավահավասարության սկզբունքներն ամրապնդվել են դեկլարացիաներում և սահմանադրություններում: 18-րդ դարի վերջին, Ֆրանսիական հեղափոխությունը հռչակեց *«ազատություն, հավասարություն և եղբայրություն»* հեղափոխական լոզունգը:

Մարդիկ միշտ ձգտել են հավասարության և արդարության, քանի որ դրանց ապահովումը լավ հասարակություն կառուցելու նախապայմանն է և Հիսուսի ուսմունքը տարածվեց արագ, որովհետև քարոզում էր հավասարություն:

***Արդարության** գաղափարը եղել է բոլոր հասարակություններում: Տարբեր ժամանակներում իշխանության ներկայացուցիչներն էլ դա հիմնական նպատակ են համարել կամ գոնե ի լուր աշխարհի հայտարարել են այդ մասին: Արդարության գաղափարի հիմքում ընկած է արդարացի, անաչառ լինելը: Մասնագետների կարծիքով յուրաքանչյուրը, այդ թվում՝ փոքր երեխան, ունի արդարության բնածին զգացողություն, պահանջարկ: Երբ փոքր երեխան վրդովված ճչում է, նա որոշակի «անարդարության» մասին է հայտնում: Հին Հունական իմաստասերներն արդարության գաղափարը դիտարկել են ազնվության և հավասարության գաղափարների հետ միասին: Նրանք արդարությունը նույնացրել են ճշմարտացիության, ներդաշնակության և առաքինության հետ:Արդարության գաղափարի կարևորագույն առանձնահատկություններից է «մեկ արշինով չափելը», այսինքն՝ մարդկանց, նրանց արածը միևնույն չափանիշով գնահատելը, տարբերություն չդնելը: Դատավորն ունի մեկ կշեռք, որով կշռում է հարուստին և աղքատին, մեծին և փոքրին: Նրա դատավճիռը պայմանավորված է ոչ թե անհատով, այլ գործի հանգամանքներով: Այսինքն՝ մարդուն գնահատելու, դատելու համար դիտարկում ենք նրա վարքագիծը, նրա կատարած գործողությունը և դրա

արդյունքը, ոչ թե այդ մարդուն՝ ըստ իր հատկանիշների(սեռ, տարիք, հասարակական պատկանելություն և այլ):

Մինչ թեմային անդրադառնալը ուսուցիչը նախ պետք է ստեղծի մթնոլորտ,որում աշակերտները պատրաստ լինեն ոչ միայն ընկալել ասվածը,այլ կիրառեն իրենց կյանքում,առօրյայում: Գրականությունը հենց կյանքն է ,մարդկային հարաբերությունները:Աշակերտների համար ստեղծված պայմանները,մթնոլորտը կնպաստեն ,որ նրանք սիրով մասնակցեն դասերին և իվերջո կգիտակցեն ,որ դա ուղղակի դաս չէ,այլ իր կյանքն է,իր լուսավոր ապագան:Եթե ուսուցիչը կարողացավ

Հղում// https://hy.wikipedia.org/wiki

թեմայի արդիականությունը վեր հանել ու ուղղորդել աշակերտին մարդկանց հարաբերությունները վերլուծելու և արժևորելու, հոգատար և կարեկից վերաբերմունք դրսևորելու սեփական անձի, մտերիմների, շրջապատի մարդկանց նկատմամբ՝ուրեմն դասը հաջողված է ու ուսուցչի առաքելությունը իրականացված:Միայն խոսքը,բառերը բավական չեն արժեհամակարգ ձևավորելու համար,աշակերտը պետք է տեսնի,գործի,իրականացնի,փոխանցի:Եթե ուսուցիչը մարդասեր է,արդար,հանդուրժող,սակայն երեխան ընտանիքում կամ շրջապատում այլ բան է տեսնում ու հասկանում՝աշխատանքը դժվարանում է,որովհետև տեղի է ունենում բախում իրականության,ուսուցչի և ընտանիքի միջև:Ինչպիսին պետք է լինի ուսուցչի ռազմավարությունը այս գործընթացը իրականացնելիս.

-Օգտագործի բազմազան մեթոդներ և հնարներ աշակերտներին մոտիվացնելու և բարության ու սիրո մթնոլորտ ստեղծելու համար,օրինակ<< Ժպտում ենք միմյանց>> մեթոդը և նմանատիպ այլ մեթոդներ և հնարներ՝հաշվի առնելով տաիքային հոգեբանությունը,դասարանի մթնոլորտը:

-ՈՒսուցիչը պետք է կարողանա ապրումակցի դիմացինին,հասկանա նրա զգացմունքները և այդպիսին էլ դաստրարակի:Եթե ուսուցիչը արժեքների կրողը չէ,ապա անպտուղ է նրա աշխատանքը:

-Ուսուցման հետաքրքրությունը պայմանավորված է նաև թեմայի արդիականությամբ, օրինակ իրավահավասարության, մարդասիրության և արդարության մթնոլորտի ձևավորմանը կնպաստի կյանքից օրինակներ բերելը,հետո աշակերտներն կարողանան այդ ամենը կիրառել իրենց կյանքում՝օրինակներ բերելով,քննարկելով,վերլուծելով: խոսքը պետք է գործի վերածել,որովհետև առանց գործի խոսքը մեռած է:**Ուսուցչուհին առաջինը պետք է իր օրինակով ոգևորի նրանց:**

*Air France ինքնաթիռում հիսուներկու տարեկան սպիտակամորթ կինը հրաժարվեց նստել սևամորթի կողքին: Նա կանչեց բորտուղեկցորդուհուն և խնդրեց նոր տեղ գտնել:

-Ես ընդհանրապես պատրաստ չեմ նստել այս սևամորթի կողքին:
Բորտուղեկցորդուհին ասաց.
-Թույլ տվեք մեկ այլ տեղ ստուգել ուղևորների ցուցակում:
Քիչ ժամանակ անց վերադարձավ և ասաց, որ ինքնաթիռի երկրորդ դասի հատվածում այլ դատարկ նստատեղեր չկան... բայց ամեն դեպքում կխոսի օդաչուի հետ:
Մի քանի րոպե անց վերադարձավ.
-Պարոն օդաչուն ասաց, որ առաջին դասի բաժնում ազատ տեղ կա, բայց ավիաընկերության օրենքներում հնարավոր չէ ուղևոր տեղափոխել երկրորդ դասից առաջին դաս: Բայց մյուս կողմից հարգարժան ուղևորին տհաճ մարդու կողքին նստեցնելը հակասություն է և անմարդկային քայլ: Այս պատճառով պարոն օդաչուն համաձայնեց երկրորդ դասից տեղափոխել առաջին դաս:
Սեւամորթի աչքերից արցունքները հոսեցին: Մինչ տիկին սպիտակամորթը պատրաստվում էր վերցնել պայուսակը, բորտուղեկցորդուհին հարգալից տոնով դիմեց սևամորթին.
-Հարգարժան պարոն, խնդրում եմ վերցնել ձեր անձնական իրերը, որպեսզի ձեզ առաջնորդեմ դեպի առաջին դասի ամենաբարեկեցիկ հատվածը... ինչպես ասաց

պարոն օդաչուն, ամենևին էլ մարդասիրական և ճիշտ չէ տհաճ և անհարգալից մեկի կողքին նստելը.
Այս նախադասություններն ասելուց հետո ականատես բոլոր ուղևորները երկար ծափահարումներով հաստատեցին ու խրախուսեցին օդաչուի այս **մարդասիրական արարքը**: Այդ օդաչուն Դենիս Գուրալիդոն էր, ով այս գեղեցիկ և մարդկային քայլի համար ընտրվեց Էյր Ֆրանս ավիաընկերության նախագահ:
Հ.Գ. Երանի նրան, ով ՄԱՐԴ է...
Հարուստ լինել կարող են բոլորը, բայց ոչ բոլորը կարող են «ներողամիտ» լինել, հարուստ լինելը հմտություն է, իսկ առատաձեռնությունը՝ առաքինություն: Սովորել կարող են բոլորը, բայց ոչ բոլորն են «հասկացված», գրագիտությունը հմտություն է, բայց հասկանալը արժանիք է: Բոլորն են սովորում ապրել, բայց ոչ բոլորն են կարողանում գեղեցիկ ապրել, կյանքը սովորություն է, բայց գեղեցիկ ապրելը **առաքինություն**:
---
* **Հղում//Շուշաննա Հայասա**

1.3 Հաճի աղայի կերպարի հոգեբանական զարգացումը ստեղծագործության սկզբում, մեջտեղում, վերջում

Գրական կերպարի վերլուծությունը պետք է նպաստի աշակերտի ճիշտ եզրահանգումներին,նրան ավելի լավը դարձնի: Հասկանա և մեկնաբանի գրական-գեղարվեստական կերպարի դերը գրվածքում: Իմանա, պատկերացում կազմի գրական կոնֆլիկտի (բախման) մասին, կյանքից և գրականությունից առանձնացնի կոնֆլիկտի տարբեր ձևեր: Գտնի և մեկնաբանի ստեղծագործության կոնֆլիկտն ապահովող հակադիր բևեռի կամ բևեռների բախումը: Հաղորդակցվի և համագործակցի վստահորեն, լսի դիմացինին, կարողանա ճիշտ ձևակերպել հարցը, հիմնավորի և մեկնաբանի սեփական տեսակետը, կատարի տեղին և նպատակային հարցադրումներ: Կարողանա մեկնաբանել հերոսների արաքների տրամաբանությունը և հաջորդականությունը: Պատմվածքի գլխավոր հերոսը Հաճի աղան է,որը լսելով թշնամու հարձակման մասին խուճապահար փախուստի ծրագիր է մշակում:Դերենիկ Դեմիրճյանը հոգեբանի նուրբ դիտունակությամբ ընթերցողին է ներկայացնում Հաճի աղայի հակասական կերպարը:Գլխավոր հերոսի Հաճի անունը ունի իր բացատրությունը,որը նշանակում է ուխտագնաց:Երուսաղեմ ուխտի գնացած մարդու մասին կարելի է ենթադրել,որ նա քրիստոնեական արժեքները կրող է,մարդասեր է և իվերջո բարեպաշտ ու աստվածապաշտ է:Սակայն ընթերցողը պատմվածքի սկզբում պատկերավոր տեսնում է Հաճի աղային <<Հաճի աղան, որի փողոցով անցնելն իսկ մի հանդես էր. աղայակա՛ն: Միշտ հաստ շալը վաթսուն-յոթանասուն տարեկան կուզի վրայով վզին փաթաթած, երկար իրանը բերընքսիվար

ընկնելու պես՝ առաջ թեքած, ուղտի վիզը առջև երկարած, սև ակնոցների արանքից սապատավոր քիթը օդի մեջ խրած, հայացքը դեպի հեռուն, մի կետի՝ ընթանում էր նա: Եվ այդ ֆեսավոր Հաճին ծիսակատարությունների նման անխուսափելի գործելակերպեր ուներ փողոցով անցնելիս. գիտեր ամեն դար ու փոսի, քար ու ոտնատեղի սովորական պատռվածքը, և եթե սայլի, ոտքի կամ բնության հետևանքով քարերն ու ոտնատեղերը նոր կարգով դասավորվեին, Հաճի աղան կանգ կառներ, լրջորեն կկշռեր նոր ոտնատեղի վտանգի չափը, իր դեղնած գավազանի ծայրով բախելով, կստուգեր ոտքը դնելիք քարի հավատարմությունը և, գավազանը ցեխի կամ ջրի մեջ դիմհար տալով, զգույշ աքլորի պես ոտքերը գետնից պոկելով ու վար դնելով, գերագույն խնամքով կանցներ վտանգավոր տեղը>>:

Կարդալով այս տողերը հասկանում ես,որ Հաճի աղան կյանքի փորձ ունի,իմաստուն է,շրջահայաց,զգոն,արագ կողմնորոշվող:Հեղինակը շարունակում է ներկայացնել կերպարի հոգեվիճակը.<<Անհանգիստ էր վերի՜ն աստիճանի: Արդեն մի շաբաթ է, ականջին դիպել էր, որ թուրքը գալիս է>>: Դեմիրճյանի հոգեվերլուծությունն բնորոշվում է հերոսի գործողություններով; Հաճի աղայի ներաշխարհի վայրիվերումները, հոգեբանությունը, բացահայտվում է նրա արարքների միջոցով.

Փախուստից առաջ	**Փախուստի ընթացքում**	**Փախուստից հետո**
Հաճի աղան վանքի պես տան տեր դառավ, և այդ տունը այսօր քանդվում էր: Ի՜ր տունը, հի՜ն տունը: Արյունը գլուխը խփեց: Ինչպե՞ս, իր ընտանիքը, հարստությունը, այդ նույնքան հիմնավոր բանը, որքան ինքը՝ **աշխարհքի հարստությունը**… Եվ Հաճի աղան, իբրև փորձված մարդ՝ իսկույն հարմարվեց կենսական իմաստության. որոշեց խիստ ու հրամայական մի կարգ՝ ազատել ամենակարևորը, իսկ եթե այդ չեղավ՝ **կարևորագույնը**: Վճռեց	Ու մինչ տնեցիք հավաքում էին իրերը, Հաճի աղան սկսեց անցուդարձ անել սենյակում՝ իբրև տխուր ուղտի կերպարանք: Նայում էր անկարգացած սենյակին, ուր իրար վրա թափված էին «անպետք» ու «ավելորդ» իրերը, տեսնում էր իր տան քանդվելը, բայց հուսահատությունից չէր զգում ցավը: Ավելի մեծ զուլումը աչքին բան չէր թողնում երևալու: Նա դեղնել, մագաղաթ էր դառել: Տնեցիք շորերը կապում, նորից քանդում	Հիմա էր հաշիվ տալիս իրեն և զգաստորեն հաշիվ տալիս, որ հենց այդ սարսափներն է կրել իր քույրը, այն արհամարհված էակը, որի մեռնելը ինքը ցածոգի կերպով այնքա՜ն հեշտ և հասկանալի համարեց փախի օրը: Եվ ինչպե՞ս կարելի էր թողնել նրան մահվան առջև, և կա՞ արդյոք մի արարած, որ չտանջվի մարմնական ցավից, չվախենա մահից և իրավունք չունենա ապրելու: Եվ ի՜նչ համակերպությամբ ընդունեց անդամալույծը

ու դաժանացավ, ամեն ինչ անել, ամեն խստություն գործ դնել, **անգթանալ, թեկուզ և ստորանալ, բայց փրկել այդ կարևորագույնը՝ իր տունը, իսկ եթե այդ չեղավ՝ իր անձը:** նրա մոտ առաջացել էր ինքնապաշտպանական ռեակցիա, նա ամեն ձև կպաշտպաներ ընտանիքին, բայց ինչպես նաև նա ուներ հետի միտք՝ եթե չստացվեց, ինձ պետք է չէ՞ փրկեմ: Նա նյութական իրերին կարևորություն էր տալիս, և զգացմունքների ազդեցության տակ նա կատարեց ամենասխալ որոշումը իր կյանքում, նա մինչև կյանքի վերջ տանջվեց:	և կրկին ընտրում էին, և շարունակ լսվում էր «Հաճ աղայիս գուլպաները», «Հաճ աղայիս դոշակը», «Հաճ աղայիս քուրքը չթողնեք» Հաճին նայեց անդամալուծին, բայց չտեսավ նրան: Նա սենյակի իրերն էր մտովի տեղավորում ֆուրգոնի մեջ և որոնում էր ամենապետքական իրերը: Ու այսպես «պետքականները» կրկնում էր ծիսակատարության ձայնով և զգում էր, որ մեծ գործ է կատարում, **տուն է ազատում**:	իր համար որոշած վիճակը և ի՜նչ անձնվեր հոգատարությամբ նա մտածում էր փախչողների ապահովության մասին: Սա արդեն խոցում էր Հաճու սիրտը: Եվ երբ Հաճին հիշում էր, թե ինչպես ինքը անկարող եղավ կյանքի սերը մեռցնել իր մեջ և դիմանալ մահվան մերձեցման, մինչդեռ այն հասարակ, չնկատված էակը այնպես արիաբար վճարեց իր տուրքը, Հաճին խայթված վեր էր բարձրացնում իր խոնարհած գլուխը և խելագարի պես նայում Հաճի մորը:

1.4. Սրբունի կերպարի վերլուծություն

Սրբունի կերպարը մարդասիրության,բարության վառ օրինակ է: Սրբունը Սրբուհի անվան կրճատ ձևն է :Իմ կարծիքով անունը նույնպես հեղինակը այնքան ճիշտ է ընտրել ,այն համապատասխանում է կերպարի էությանը:Նա առաքինի կին էր,աշխատասեր և միշտ ցանկանում էր օգտակար լինել տան անդամներին,չնայած սաստիկ դժվար էր ընտանիքի կարն ու կարկատանը,բայց նա դա անում էր անմռունչ:Սրբունը իր կյանքը իմաստավորում է մարդկանց օգտակար լինելու մղումով:Հոգեբանական խորք ունեցող այս պատմության մեջ հեղինակը ներկայացնում է երեսպաշտ միջավայրի հակադրությունը:

Հեղինակը այսպես է ներկայացնում Սրբուհուն.

<<Հենց այդ փոքրիկ սենյակում, անկողինների ծալքի տակ նստած էր մի տարեց կին: Դա Հաճի աղայի անդամալույծ քույրն էր, Սրբունը, որ ամուսնու մահից հետո լվացք անելիս մի անգամ սաստիկ մրսեց, տիֆով հիվանդացավ և անդամալույծ եղավ, էլ չիմացվեց՝ տիֆի՞ց էր, թե արդեն տրամադիր էր: Ականջներն էլ ծանր էին: Հաճի աղան իր անվան չուտեցրեց, որ իր հիվանդ քրոջը ուրիշները պահեն և իր վրա խոսեն, հիվանդին բերեց իր տուն և անկյուն տվեց: Խեղճ կինը **ի բնե աշխատասեր** և **ինքնասեր**, ուզելով մի բանով **եղբորը վարձահատույց լինել** ընտանիքի կարն ու կարկատանը, ինչպես և գուլպան իր վրա առավ, ու թեև նրա համար սաստիկ դժվար էր այդ աշխատանքն էլ, բայց **նա անմռունչ ու կամովին անում էր**: Գեր էր, ծանր և սաստիկ նեղությամբ նստած տեղից շարժվում էր և գետնաքաշ մի կերպ դուրս գնում:

Հաճու նստած տեղից երևում էին նրա ուռած մատները, որով նա ծնկան վրա փռած մի կտոր հարդարում, շուռումուռ էր տալիս, նորից հարդարում, չափում ինչ-որ մի կարկատանի համար:

Այդ մատներն սպիտակ էին, կարծես ջրով լիքը: Եվ այնքան խաղաղ, առօրյա էր այդ մատների աշխատանքը, որ բոլորովին չէր բռնում օրվա խռովիչ դեպքերին>>:

Հակադրության վառ օրինակ է հատկապես այն պահը,երբ սառնասիրտ եղբայրը չոր հրաժեշտ է տալիս իր ճակատագրին լուռ համակերպված քրոջը.

<< Հաճին մի երկու անգամ գնաց-եկավ մեծ սենյակում, հետո՝ մուշտակը հագած եկավ փոքր սենյակը և մոտեցավ քրոջը:

— Է՞, Սրբուն,— ասաց նա դժվարությամբ ու տհաճությամբ,— մնա՛ս բարով:

Եվ ձեռքը դրեց նրա ձեռքի վրա:

— Մի՞ վախնա, թուրքերը քեզի ձեռք չեն տա. երբ օր ներս մտնին, ըսե՝ «տունը ձեզի», ինձի ձեռք մի՛ք տա:

Անդամալույծը դողդոջուն ձեռքերով բռնեց Հաճի աղայի ձեռքը, տարավ **շրթունքներին և համբուրեց:** Մի արցունքի կաթիլ նրա աչքերից գլորվեց, ընկավ Հաճի աղայի ձեռքին: Անդամալույծը ծոցից թաշկինակը հանեց և սրբեց եղբոր ձեռքը և ապա՝ մի զույգ «դֆտիկ» ձեռնոց հանելով մինդարի տակից՝ տվեց Հաճի աղային.

— Ձեռքե՛րդ անցու՝ ճամփան չմսիս:

Հետո փղձկալով վրա բերեց.

— Քոռանա՛ լուսս... տղոցը համար չկրցա գործե:

— Բան չկա, բան չկա,— սառը հանգստացրեց Հաճի աղան>>:

Եվ ի՜նչ համակերպությամբ ընդունեց անդամալույծը իր համար որոշած վիճակը և ի՜նչ անձնվեր հոգատարությամբ նա մտածում էր փախչողների ապահովության մասին: ինչպես էր հրաժեշտ տալիս այն մարդկանց,որոնց համար **ինքը ավելորդ էր.**

— Աստված հետներդ, գառնե՛րս, գնացեք, ինձի մի՛ք աշե:

— Աստված հետներդ, գառներս, գնացեք... Հաճ աղայիս, տղոցը լավ աշեցեք, չմսին.. խոսեց անդամալույծը հոգածու ձայնով:

Պատմվածքում երևում է ,որ շատերն են համամիտ Հաջի աղայի ճիշտ որոշման հետ :

Դատարանի գրագիրն էր:

— Ի՞նչ եք կայնե,— գոռաց:

Ուրիշ երկու ֆուրգոն էլ եկան դեմ առան: Սկսեցին շտապեցնել: Գրագիրը գոռգոռաց: Նրան բացատրեցին, որ անդամալույծի պատճառով են Հաճիենք կանգ առել:

— Ի՞նչ եք կայնե, գնացեք,— ձայն տվեց գրագիրը,— անդամալույծ տանելու վա՞խտ եք գտե, **бросьте ее к чорту!**

— Կնկան թողնեն, երթա՞ն, ի՞նչ կըսես,— առարկեցին ֆուրգոնի միջից:

— А что-ж: Պռավիլա՞ է, ի՞նչ է: Եփ օր էվակուացիա է, **անդամալույծները ավելորդ են:**

Սակայն մարդասիրությունը,բարությունը չէին վերացել .տխուր էին Հաճի աղայի թոռները,հարսները և կինը՝Հաճի մարը.

— Ջանըմ, գնացե՛ք, իմ պատճառովս միք ուշանա, Հաճ աղաս մեղք է,— տրտնջաց անդամալույծը ներսից:

— Ադպես բան չկա, մենք կերթանք, դու ալ պիտի գաս,— հրահանգեց Հաճի մարը և դուրս գնաց՝ կառապանին տեսնելու:

Հարսները ներս եկան, և մինչև անգամ երեխաները բոլորեցին անդամալույծի առաջ: Բայց նա տեսնելով, որ ամենքը իրեն են նայում և սպասում, վեր նայեց խաղաղ ու բարի աչքերով և ասաց.

— Դուք գնացեք, ինձի մի՛ք աշե, ես կմնամ, **իմ ջանս ազիզ չէ:**

Այդ Ժամանակ Շմավոնն ու հայ կառապանը՝ Հաճի մոր թևերից բռնած՝ բռնի դուրս էին բերում: Հաճի մարը զայրացկոտ շարժումներով աշխատում էր թևերն ազատել և ներս գնալ նորից անդամալույծին բերելու:

— Թողե՛ք, ես անոր պիտի տանիմ,— ծվում էր նա:

— Տեղ չկա, մա՛րս, տեղ չկա,— համոզում էր կառապանը:

Բայց կինը **կատաղի դիմադրում էր**:Հարսներն ու երեխաները լաց էին լինում:

Համեմատենք

Հաճի աղա	Սրբուն (Սրբուհի)
Եսասեր	
Դաժան	Ինքնասեր
Անգութ	Անձնվեր
Հաշվենկատ	Հոգատար
Հնարագետ	Խաղաղ
Ճարպիկ	Զուսպ
Փորձառու	Աշխատասեր
Ունևոր	Ուժեղ

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

2.1.Սովորողների արժեքային համակարգի ձևավորումը դասապրոցեսում

Ուսուցիչը ինքը պետք է լինի այն,

ինչ ինքը ցանկանում է աշակերտին դարձնել:

Վ.Ի. Դալ

Ամերիկյան սոցիալական հոգեբան Գորդոն Ալպորտ (1897-1967) մշակել է արժեքների հետեւյալ դասակարգումը.

1. Տեսական. Մարդն առաջին հերթին շահագրգռված է ճշմարտության բացահայտմամբ:

2. Տնտեսական. «Տնտեսական» մարդն առաջին հերթին գնահատում է այն, ինչ օգտակար է կամ ձեռնտու:

3. Էսթետիկ. Նման մարդն ամենից շատ գնահատում է ձևն ու ներդաշնակությունը:

4. Սոցիալական. Սոցիալական տեսակի համար ամենաբարձր արժեքը մարդկանց սերն է:

5. Քաղաքական. Քաղաքական տեսակի գերիշխող շահը իշխանությունն է:

6. Կրոնական. Այս տեսակի ներկայացուցիչները հիմնականում շահագրգռված են աշխարհը որպես ամբողջություն հասկանալով:

Յուրաքանչյուր երեխայի ձևավորման վրա իր անմիջական ազդեցությունն է գործում ոչ միայն ընտանիքը, այլև դպրոցը: Դպրոցում երեխան ոչ միայն գիտելիք, կրթություն է ստանում, այլև կյանքի իրական դպրոց անցնում՝ յուրացնում հասարակության նորմերը, կանոնները, այլ անձանց՝ ինչպես մեծերի, այնպես էլ իր հասակակիցների հետ շփման, վարքագծի կանոնները, ձեռք բերում ինքնուրույնություն, հաճախ բախվում այնպիսի խնդիրների, որոնց գոյության մասին իր ընտանիքում չէր էլ պատկերացնում, առանց ծնողների միջամտության փորձում հասնել դրանց լուծմանը: Ուսուցչի անձով է հաճախ պայմանավորված դպրոցում երեխայի առաջադիմությունը. առարկայով երեխայի հետաքրքրվածությունը մեծանում է, եթե այն դասավանդող ուսուցչի և երեխայի միջև կա **փոխադարձ հարգանք, համակրանք**, **դրական տրամադրվածություն:**
**Այս առումով անհրաժեշտ է, որ ուսուցիչը գտնի հետևյալ հարցերի պատասխանները՝*

ինչպե՞ս կարող եմ ավելի արդյունավետ դասավանդել.
ինչպե՞ս կարող եմ օգտակար լինել.
ինչպե՞ս կարող եմ իմ աշակերտների վերաբերմունքը դպրոցի նկատմամբ ավելի դրական դարձնել:
Ըստ իս եթե ուսուցիչը կարողանում է դասարանում բարոյահոգեբանական մթնոլորտ ստեղծել՝դասը երեխայի համար հետաքրքիր ու տպավորիչ կլինի:Շատ կարևոր է,որ յուրաքանչյուրը իրեն կարևոր զգա,օգտակար լինի ,ինչ որ մի բան անի կամ ներկայացնի,միջառարկայական կապ ստեղծվի,ոչ մի աշակերտ իրեն անտեսված չզգա:

Հղում//<<101 գաղափար նորարարական մեթոդներ կիրառող ուսուցիչների համար>>, Բուդապեշտ,2006թ.

***Աշակերտներին զբաղված պահելու համար նախատեսված վարժությունները պետք է լինեն՝**
կարճ (ոչ ժամանակատար),
դժվարության որոշակի մակարդակի (ձեռքբերման իրական զգացում ապահովելու համար),

խաղային և հետաքրքիր (աշակերտներին շահագրգռող):

Աշակերտը պետք է հասկանա,որ դժվարությունները հաղթահարելի են.

Արժեքային համակարգի ձևավորումը մեկ դասաժամի և մեկ օրվա խնդիր չէ ,այս ամենին կարելի է հասնել քայլ առ քայլ՝ հաշվի առնելով երեխայի տարիքային հոգեբանությունը,սոցիալական,առողջական և ընտանեկան կարգավիճակը:Մի սխալ բառ ,արարք և վերաբերմունք կարող է աշակերտի ողջ ճակատագիրը փոխել:ՈՒսուցիչը պետք է պատվով կատարի իր սուրբ առաքելությունը՝նպաստելով արժեքային համակարգի ձևավորմանը:Աշխատանքը բարդ է ու դժվարին,սակայն ոչ անհնարին. .

Հղում//<<101 գաղափար նորարարական մեթոդներ կիրառող ուսուցիչների համար>>, Բուդապեշտ,2006թ

Սովորելը հնարավոր դարձնելու առաջին քայլը ուշադրության կենտրոնացումն է:

Շատ կարևոր է դասի մուտքը,ըստ իս այնքան հետաքրքիր պետք է լինի մուտքը,որ աշակերտին գրավի :
Կարելի է առաջարկել հետևյալ պատկերը,արդյունավետ ուսուցման գործընթացում պարտադիր է տեքստի, խոսքի ուղեկցումը պատկերներով:Գաղտնիքների առկայությունը մոտիվացնում է աշակերտներին,նրանք ցանկանում են որպե առաջ բացահայտել գաղտնիքը.

Եթե ուսուցչին հաջողվի դասի առաջին րոպեներին գրավել աշակերտների ուշադրությունը,ապա դա էապես կնպաստի դասի արդյունավետ ընթացքին:

2.2 . Հաշմանդամության խնդիր ունեցող հայտնիները

*__Խնդիրների լուծման վրա հիմնված ուսումը:__ Բացի գիտելիք փոխանցելուց, այս եղանակը նպատակ է հետապնդում զարգացնել աշակերտի՝ խնդիրներ լուծելու և համագործակցելու կարողությունները: Խնդիրների լուծման վրա հիմնված ուսման դեպքում աշակերտը պետք է ինքնուրույն հետազոտություն իրականացնի, կարողանա ըմբռնել խնդրի էությունը, ինչպես նաև ունենա SS ոլորտում որոշ գիտելիքներ. ուսման այս մեթոդի նպատակներից է նաև նշված կարողությունների զարգացումը: Այս դեպքում ուսուցիչը կատարում է համակարգողի կամ խորհրդատուի դեր: Խնդիրների լուծման վրա հիմնված ուսուցումն աշակերտներին սովորեցնում է, թե ինչպես է պետք սովորել: Աշակերտները սովորում են խմբի անդամների հետ համագործակցությամբ՝ լուծումներ գտնելով իրական կյանքից վերցված խնդիրների համար: Միաժամանակ նրանք սովորում են, թե ինչպես առավելագույնս արդյունավետ համակարգեն իրենց ուսման գործընթացը: Այս մեթոդի հիմնական իմաստն այն է, որ աշակերտի կարողություններն օգտագործվում են ոչ թե պատրաստի գիտելիք տրամադրելու, այլ գիտելիք քաղելու նպատակով: Այն դասարաններում, որտեղ աշակերտներն այս մեթոդն են կիրառում, նրանք հասկանում են, թե ինչպես է ուսումը դառնում գիտելիքի որոնման գործընթաց: Աշակերտների մոտ ձևավորվում է քննադատական մտածելակերպ, որն իրենց հնարավորություն է տալիս ձեռք բերվող տեղեկությունները փոխկապակցել այն նպատակի հետ, որի իրականացման համար կարող են օգտագործվել այդ տեղեկությունները: Խնդիրների լուծման և ուսման գործընթացի հաջողությունը կախված է աշակերտների դպրոցական և արտադպրոցական արդյունավետ աշխատանքից: Առաջադրանքների խմբային կատարումը խնայում է ժամանակը և զարգացնում է խմբի անդամների շփման և բանավոր խոսքի կարողությունները:Խնդիրների լուծման վրա հիմնված ուսումը նորարարական մեթոդ է, որի դեպքում օգտագործվում են նոր նյութը լուծում պահանջող խնդրի տեսքով ներկայացման մանկավարժական կառուցողական մեթոդներ:

---

*Հղում//<<101 գաղափար նորարարական մեթոդներ կիրառող ուսուցիչների համար>>, Բուդապեշտ,2006թ

Այս մեթոդի կիրառման հիմնական քայլերն են՝

ա) առաջադրանքի սահմանումը,

բ) տեղեկությունների որոնման տարատեսակ ռազմավարությունները,

գ) տվյալներ և տեղեկություններ ստանալու մատչելիությունը (որտեղ),

դ) տեղեկությունների օգտագործումը և խնդիրների լուծումը,

ե) սինթեզը,

զ) գնահատումը:

ՈՒսուցման ընթացքում շատ կարևոր է աշակերտի մոտիվացիան,ուսուցիչը հմտորեն և նրբանկատորեն աշակերտին պետք է տեղափոխի գիտելիքի դաշտ: Իսկ ինչպես դասի սկզբում մոտիվացնել աշակերտին,օրինակ կարելի է դա անել նկարի միջոցով և յուրաքանչյուրը բացատրի ,թե ինչը տպավորվեց իր մեջ և ինչ հասկացավ:

Խնդիրների լուծման վրա հիմնված ուսումը աշակերտին հնարավորություն կտա փնտրի,գտնի,օգտագործի,վերլուծի և գնահատի:Աշակերտը աշխատանքը իրականացնելու ընթացքում կհասկանա,որ խնդիրը հարթելու համար պետք է ունենա կամք,համբերություն,աշխատասիրություն,հավատ սեփական ուժերի հանդեպ:

ՈՒսուցիչը կարող է ներկայացնել հաշմանդամություն ունեցող հայտնիերից որևէ մեկին ,օրինակ հայտնի մոտիվացնող խոսնակ, գրքերի հեղինակ Նիք Վույչիչին,կարելի է նաև նրա մասին ֆիլմ դիտել,որը առավել տպավորիչ և հետաքրքիր կլինի աշակերտներին:Նիք Վույչիչը ծնվել է առանց ոտքերի ու ձեռքերի, սակայն դա նրան չի խանգարել ապրել լիարժեք կյանքով:Նիքից, սակայն, երկար տարիներ են պահանջվել սեփական խնդիրների մեջ ոչ թե խոչընդոտ, այլ աճի հնարավորություն տեսնելու համար: Այս պատմությունը պետք է աշակերտին հնարավորության տա, որ նա հասկանա, թե ինչպես է պետք հաղթահարել դժվարությունները, հուսահատությունը, հավատալ սեփական ուժերին և դառնալ իսկապես երջանիկ,հասկանա,որ **կյանքում ավելորդ մարդ չկա**,բոլորը հավասար են Աստծու առաջ:Նիքն անկեղծորեն պատմում է իր ֆիզիկական խնդիրների և ապրումների մասին, այն մասին, թե որքան դժվար էր իր համար համակերպվել իր վիճակի հետ, և անգամ այն պահերի մասին, երբ ինքը ցանկացել է վերջ տալ իր կյանքին:

Այնուամենայնիվ, Նիքը սովորել է բարձրանալ առանց ձեռքերի ու ոտքերի՝ բառի ուղիղ և փոխաբերական իմաստներով:

Ծնված լինելով առանց ձեռքերի և ոտքերի՝ Նիք Վույչիչը կարողացավ հաղթահարել իր հաշմանդամությունն ու ապրել լիարժեք ու անհավատալիորեն լավ կյանքով, նա հրաշալի օրինակ է բոլոր նրանց համար, ովքեր իրական երջանկությունն են փնտրում: Այժմ, լինելով միջազգային ճանաչում ունեցող մոտիվացիոն բանախոս, նա ջերմեռանդորեն իրականացնում է իր առաքելությունը: Ըստ նրա՝ ամենակարևորը կյանքի իմաստը գտնելն է և **երբեք չհիասթափվելը**, անկախ նրանից, թե ինչպիսի դժվարությունների ու հավանական խոչընդոտների կհանդիպեք:
Չնայած հանգամանքներին և դժվարություններին՝ Նիքն ապրում է «Կյանքն՝ առանց սահմանների» սկզբունքով:Նրա կյանքն արդեն ոգեշնչել է ավելի քան 8 միլիոն մարդու աշխարհի 57 երկրներում:
Ուսուցիչը կարող է նաև ներկայացնել,թե ինչպես է Նիքը ոգեշնչել իրենց տարիքի երեխաներին և նրանց կյանքը հիմնովին փոխվել է.«Դպրոցում ինձ ամեն օր ծաղրում էին իմ դասընկերները: Ես էլ չէի ցանկանում սովորել, խոսել այդ մասին, ապրել… Սակայն Նիքի մասնակցությամբ մի հավաքույթից հետո, ինձ նրա մեջ ինչ-որ բան գրավեց: Ես տեսա կրակ և կյանքի հանդեպ ծարավ նրա մեջ, ում նույնպես ծաղրել էին փոքր տարիքում:
Այդ պահից ի վեր ես սկսեցի հավատալ ինքս ինձ և սկսեցի գործել: Ես իմ մի քանի ընկերների հետ հիմնեցի շարժ՝ ծաղրանքի, վիրավորանքների դեմ: Դարձա դասարանի ավագը և սկսեցի լավ սովորել: Ես սկսեցի ապրել: Ապրել՝ նպատակով և իմաստով»:
Բարձունքների հասնելը հեշտ չէ, և հատկապես հաշմանդամություն ունեցող մարդկանց համար, բայց նրանց կյանքի օրինակները ցույց տվեցին, որ անհնարինը կարող է հնարավոր դառնալ՝ նրանց դարձնելով հաշմանդամություն ունեցող գերաստղեր:Յուրաքանչյուր մարդ էլ կյանքում դժվարությունների է բախվում, բայց երբ հաշմանդամություն ունեցող անհատը ելք է գտնում՝հաղթահարելով իր դժվարությունները, ապա նա ոչ միայն շարունակում է ապրել, այլ նաև մեծ հաջողությունների հասնել: Դա, իրոք, հրաշալի բան է:
Հաշմանդամություն ունեցող այս հայտնի մարդիկ հասել են մեծ բարձունքների իրենց անսպառ կամքի ուժի ու վախերից ամբողջությամբ ձերբազատվելու շնորհիվ:

Հանձնարարել նմանատիպ մի աշխատանք էլ աշակերտները ներկայացնեն հաջորդ դասին,կարելի է նաև հանձնարարել իրենց շրջապատում, հարազատների ,ընկերների, բարեկամների մեջ եթե կան նման մարդիկ՝ նրանց մասին էլ գրեն:

Այս թեմայի շուրջ ուսուցչուհին կարող է նաև սեր արթնացնել գրքերի հանդեպ,գրքեր որոնք փոխել են շատերի կյանքը և արժեքային համակարգը,օրինակ փառավոր մարտական ուղի անցած հետախույզ-սպա Սարգիս Ստեփանյանի մասին պատմող «Բազկամարդը» գիրքը, որը մի յուրօրինակ հարգանքի տուրք է այն մարդուն, որ հոգու անմնացորդ նվիրումից բացի հայրենիքին է նվիրել նաեւ երկու ոտքերն ու մեկ ձեռքը: Գրքի հեղինակը հենց գրքի հերոսն է՝ Սարգիս Ստեփանյանը, որն այս կարեւոր աշխատանքն իրականացրել է ռազմական լրագրող Դավիթ Դավթյանի գործակցությամբ: 2014-ին ծանր վիրավորվելու պատճառով երկու ոտքն ու աջ ձեռքը կորցնելուց 3 ամիս անց Սարգիս Ստեփանյանը սկսում է քայլել, 3 տարի անց դառնում աշխարհի չեմպիոն: Իր օրինակով ապացուցում է, որ անելանելի վիճակներ չկան, եթե ունես կամքի ուժ եւ կյանքի ծարավ:

Պատմության հերոսն էլ՝ Սարգիս Ստեփանյանը, «Հայկական ժամանակ»-ի հետ զրույցում նշել է ՝ «Բազկամարդը» ապրելու, կյանքը սիրելու ու այն շարունակելու ձգտումը պահելու մասին է: «Դու պետք է ապրես, լիարժեք ապրես: Անկախ ամեն ինչից, մարդու հետ ինչ էլ պատահում է, նա պետք է ապրի, դժվար ոչինչ չկա»,- շեշտում է Ստեփանյանը:

Կամք ,պայքար և առաջ շարժվելու ձգտումը պետք է լինի յուրաքանչյուրիս կյանքի սկզբունքը:

2.3.Հետազոտության արդյունքների վերլուծություն

Հետազոտության խնդրի շուրջ հարցումներ, դիտարկումներ և զրույցներ եմ ունեցել Ջրարբիի միջնակարգ դպրոցի 6-րդ ,7 -րդ դասարանի 20 աշակերտների ,նույն դպրոցի 8 դասղեկների և 20 ծնողների հետ: Հարցաթերթիկների միջոցով պարզել եմ ,թե յուրաքանչյուրը ինչպիսի արժեքային համակարգ ունի:

Վիճակագրական հարցաթերթիկ

1.Իմ կյանքում ամենակարևոր տեղում .(կարող եք ընտրել 3 տարբերակ)



2.Նպատակին հասնելու համար մարդասիրությունը խանգարում է .



3.Ճի՞շտ եք համարում,որ հաշմանդամություն ունեցող և ԿԱՊԿՈՒ երեխաները ներառվեն դպրոցներում.



4.Ձեր նպատակին հասնելու համար կստեի՞ք.



5. Ընտրել տարբերակներից մեկը.



Ըստ **աշակերտների** պատասխանների պարզ դարձավ ,որ կյանքում 3 բան են կարևոր. 1.ընտանիքը 2.առողջությունը 3.ընկերները

Աշակերտները կրթությունը չեն կարևորել և ի տարբերություն ծնողների և հարցված դասղեկների ճիշտ են համարում հաշմանդամություն ունեցող և ԿԱՊԿՈՒ երեխաների ներառումը դպրոցներում:

Ըստ հարցված **դասղեկների**,որպեսզի այս համակարգն աշխատի, կարիք ունենք բավարար մարդկային ռեսուրսի՝ ճիշտ մտածելակերպով, հմտություններով եւ գիտելիքներով, ինչպես նաեւ՝ դպրոցական առաջնորդության: Անհրաժեշտ է, որ ուսուցիչները, ուսուցչի օգնականները, հատուկ մանկավարժները, դպրոցների տնօրենները եւ մյուս մասնագետներն աջակցեն բոլոր երեխաների կրթության ապահովմանը: Կարեւոր է նաեւ մասնագիտական շարունակական զարգացման ծրագրերի հասանելիությունը: Բացի այդ, ավելի փորձառու ուսուցիչները եւ այլ մասնագետները պետք է ռեսուրս դառնան մյուսների համար: Որպեսզի ներառական կրթությունը բարեհաջող ներդրվի, շատ կարեւոր է **ուսուցչին միայնակ չթողնել**: ՈՒսուցիչների իրազեկվածության մակարդակի բարձրացմանը, գիտելիքի ընդլայնմանը, տարբեր կարիքներով աշակերտներին դասավանդելու հմտությունների զարգացմանն ուղղված միջոցառումները, ուղեկցված մանկավարժական տարաբնույթ մոտեցումներով, աջակցում են յուրաքանչյուր երեխայի կրթությանը: Ամեն աշակերտ պետք է վստահ լինի, որ դասարանում իրեն սպասող ուսուցիչը կանխակալ մոտեցում չունի: Ներառական կրթության ներդրումը գործընթաց է, որը չի կարող իրականացվել մեկ օրում: Այս գործընթացում մարդկային ռեսուրսը կարեւորագույն գործոններից է:
Ծնողները հիմնավորեցին ,որ Հայաստանում մտավոր եւ ֆիզիկական հաշմանդամություն ունեցող երեխաները հաճախ ընկալվում են որպես «արտասովոր երեւույթ»և նման պատճառներով ստեղծված կարծրատիպերը կոտրելը բավական դժվար է:

Սակայն պետք է նշեմ, որ հարցված **8 դասղեկները և 15 ծնողները կարևորել են.**

1.ընտանիքը

2.առողջությունը

3.կրթությունը

Ցավալի է,բայց փաստ,որ 20աշակերտներից միայն հինգն են կարևորել կրթությունը և 15աշակերտ նախընտրել են կարևոր եռյակում ընդգրկել ընկերությունը:Իմ կարծիքով 6-րդ և 7-րդ դասարանցու համար ընկերությունը արժեք է և հենց այս տարիքում է երեխան ինքնադրսևորվում:Աշակերտի կյանքում կարևոր փոփոխություն է տեղի ունենում. հասակակիցների խումբը դառնում է ավելի կարևոր: Մինչ այդ երեխայի համար ամենակարեւոր մարդիկ մեծերն են: Առաջին հերթին նրա ծնողները, հետո մյուս հարազատները, մանկավարժներն ու ուսուցիչները: Նրանք հոգ են տանում նրա մասին, սովորեցնում : Աշակերտը ունի խաղընկերներ և հասակակիցների կարծիքն աստիճանաբար դառնում է ավելի կարևոր, քան ծնողների ասածը: «Ընկերությունը քմահաճույք չէ և միջոց չէ տհաճ ու ձանձրալի բաներից խուսափելու համար»,- ընդգծում է Լյուդմիլա Պետրանովսկայան: – Շփվելով հասակակիցների հետ՝ նա սովորում է հեղինակություն ձեռք բերել, լուծել կոնֆլիկտները, հասկանալ մարդկանց, հավատարիմ մնալ, ընտրել ընկերներ:Սա դեռահասի առաջատար գործունեությունն է, այլ ոչ թե դպրոցական առարկաների ուսումնասիրությունը»:Հենց այս տարիքում է,որ հատկապես տղաների առաջադիմությունը կտրուկ նվազում է և տարիքային հոգեբանությունը հաշվի առնելով ՝ես հասկացա,թե ինչու են 20աշակերտներից 15-ը ընտրել ընկերությունը:Ծնողները դադարում են նրա համար օրինակելի լինել: Նա ընդօրինակում է իր խմբի ենթամշակույթը: Եվ դա վերաբերում է ոչ միայն արտաքին տեսքին: Ինքնագիտակցությունը, պատասխանատվության զգացումը մարդը ձեռք է բերում տվյալ տարիքում:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Կատարված ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնելու, որ՝

1. Ներկա ժամանակաշրջանում հասարակության կարգավորիչ գործառույթի, հասարակական հսկողության թուլացման, կրթական ոլորտում ուսուցչի մասնագիտության հանդեպ հարգանքի նվազման պարագայում Հայաստանում դպրոցի դերի նվազում կա ,որը սովորողների մոտ ուսուցման հանդեպ անհետաքրքրություն է առաջացնում:

2. Ընտանիքը և հատկապես՝ երեխան, մեր հասարակության մեջ մշտապես դիտարկվել են որպես բարձրագույն արժեք: Սակայն Հայաստանում ընթացող ճգնաժամային երևույթները չէին կարող իրենց ազդեցությունը չունենալ . աղքատությունը, գործազրկությունը,44-օրյա պատերազմը, արտագաղթը, ժողովրդագրական բացասական փոփոխությունները, արտագնա աշխատանքի մեկնելու հետևանքով՝ կիսատ ընտանիքների առաջացումը և այս ամենը իրենց բացասական անդրադարձը ունեն արժեքային համակարգի ձևավորելիս :Երեխան, դեռևս չունենալով բավարար կենսափորձ, արժեքայինկողմնորոշումների իր համակարգը կառուցում է հիմնվելով ընտանիքի, սոցիալական միջավայրի, ընկերների կողմից դրանք իրեն փոխանցելու վրա:Եթե նախկինում երեխայի արժեքային համակարգում, մասնավորապես արժեք-նպատակներում, առաջնային տեղ էր տրվում ընտանեկան երջանկությանը, որից հետո՝ կրթությանը, ընկերական լավ միջավայրի ձևավորմանը, ապա ներկայումս՝ նյութական բարեկեցությունն է ու բարօրությունը: Յուրաքանչյուր անձի ձևավորման, ֆիզիկական և մտավոր զարգացման գործընթացում ընտանիքը, ծնողները ունեն անփոխարինելի դերակատարություն : Մինչդեռ ընտանիքում առկա սոցիալ-տնտեսական և հատկապես հոգեբանական բնույթի խնդիրները՝ ծնողների անտարբերությունը միմյանց և երեխաների նկատմամբ, հանդուրժողականության պակասով պայմանավորված «սերունդների կոնֆլիկտը» իր բացասական ազդեցությունը ունի երեխայի արժեքային համակարգի ձևավորման պարագայում :

3.Ներառական կրթությունն օգնում է հաղթահարելու խտրականությունը: Իմ կողմից կատարված հարցումները ցույց են տալիս, որ երեխաները ավելի հանգիստ, քան մեծահասակները, ընդունում են տարբերությունները : Եթե հաշմանդամություն ունեցող երեխաները ևս հաճախեն նույն դպրոցը, ինչ մնացածները, ապա բոլորի մեջ կձևավորվի անկանխակալ վերաբերմունք հաշմանդամություն ունեցող բոլոր մարդկանց նկատմամբ, և կարմատավորվի այն գիտակցությունը, որ հաշմանդամություն ունեցող մարդիկ հասարակության լիիրավ անդամներ են:Նման միջավայրն էլ իր հերթին նպաստում է հասարակության բոլոր անդամների հնարավորությունների հավասարեցմանը՝ հաստատելով, նոր հարաբերություններ և ստեղծագործական հնարավորություններ:

4. Հայաստանը վավերացրել է նաեւ Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին կոնվենցիան: Կարեւոր է, որ հաշմանդամություն ունեցող աշակերտներին կենտրոնացված մոտեցում ցուցաբերվի, որովհետեւ շատ համակարգերում նրանք ամենախոցելի խումբն են, շատ երկրներում նրանց պարզապես թաքցնում են: Երբեմն ընտանիքները հաշմանդամություն ունեցող երեխաներին դպրոց չեն ուղարկում, որովհետեւ այնտեղ նրանք մերժված են եւ չեն ստանում բավարար աջակցություն:

5. Կարեւոր խնդիր է ստեղծել ներառական կրթության այնպիսի համակարգ, որը հարմարեցված կլինի տեղական կարիքներին եւ հիմնված՝ **հասարակության կողմից ընդունված արժեքների ու նորմերի վրա:**

6.Որպեսզի նպաստենք յուրաքանչյուր աշակերտի սովորելուն, անհրաժեշտ է փոխել ոչ միայն կրթական համակարգը, այլեւ՝ **մարդկանց վերաբերմունքը:**

7.Դպրոցում երեխաներին միմյանցից առանձնացնելու օրինական հիմքեր չկան: Երեխաները պետք է սովորեն միասին, դա օգտակար կլինի բոլորի համար: Պետք չէ նրանց պաշտպանել միմյանցից: Բոլոր երեխաներին պետք է կրթություն, որը կօգնի նրանց հարաբերություններ հաստատել և պատրաստվել կյանքին հասարակության մեջ: Միայն ներառական մոտեցումը կարող է նվազեցնել վախը և նպաստել **բարեկամության, հարգանքի ու փոխըմբռնման հաստատմանը**:

Այս պատմվածքի գաղափարը կայանում է նրանում, որ նյութականը չնչին արժեք ունի մարդկային կյանքի դիմաց և առավել կարևոր է մարդկային փոխադարձ հարաբերությունները, ինչը, որ մեր հերոսը հասկացավ պատմվածքի վերջում, բայց ավաղ արդեն ամեն ինչ կորած էր:

Կան իրավիճակներ, երբ մարդն իրեն ավելորդ է զգում: Մարդը միշտ պետք է հասկանա, որ հետաքրքիր է ուրիշներին, ունի նույն արժանիքները: Չէ՞ որ բոլորս ծնվում ենք ինչ-որ նպատակի համար և ոչ-ոք չի կարող լինել ավելորդ: Պարզապես դա պետք է գիտակցել,պարզապես դա պետք է զգալ…

*Բախտը՝ խա՛ղ է ճարպիկ
Ձեռքերի և մտքի,
Եվ միշտ էլ անբախտ են
Վեհերոտ սրտերը,
Ի՜նչ փույթ, թե երբեմն
Տառապում է հոգին,
Տեսնելով կոտրտված
Ու կեղծված ժեստերը:

Բուքի մեջ լինի, թե
Առօրյա գաղջ ցրտում,
Կորուստի պահերին
Թե վշտի դարանում,
Երևալ հասարակ, պարզասիրտ ու ժպտուն՝
Ահա քեզ մեծագույն արվեստը աշխարհում»:

Հղում//Եսենին <<Սև մարդը>>,թարգմանությունը՝Պ.Սևակ

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Սուխոմլինսկի Վ. Ա., Սիրտս նվիրում եմ երեխաներին, Երևան, 1977թ., 317 էջ:

2. Ա. Ե. Օլշաննիկովա, Հույզեր և դաստիարակություն, Երևան, 1985թ., 84 էջ:

3.<<101 գաղափար նորարարական մեթոդներ կիրառող ուսուցիչների համար>>, Բուդապեշտ,2006թ.

4. Լեոնտև Դ.Ա. Արժեքային կողմնորոշումների ուսումնասիրության մեթոդիկա.- Մ., 2002, էջ 17

5. Սարգիս Ստեփանյան,Դավիթ Դավթյան <<Բազկամարդը>>գիրքը,2022թ. 204էջ

6.Նիք Վույչիչ <<Կյանքն առանց սահմանների>>գիրքը,2020թ. 312 էջ

7.Դ. Դեմիրճյան<< Ավելորդը>>

8. Ուսուցման արդյունավետ հնարներ / Ս. Խաչատրյան.- Եր.: Ֆրիդրիխ Էբերտ հիմնադրամ, Հայաստան 2020.- 74 էջ:

Դասի պլան

Դասարան՝ 5-րդ դասարան

Առարկա՝մայրենի

Դասի թեման՝Ալիսա Կիրակոսյան Նամակ առ Հայաստան

Լեզվական նյութը՝ բառ-նախադասություն

Դասի նպատակը՝

1. տեղեկություն տալ հեղինակի կյանքի և ստեղծագործության մասին
2. բացատրել բանաստեղծության բովանդակությունն ու կառուցվածքը
3. զարգացնել հասկանալի կարդալու կարողությունը
4. սովորեցնել բառ-նախադասությունների կիրառությունը

4.հարստացնել բառապաշարը

Վերջնարդյունքները՝
Աշակերտը պետք է կարողանա.
1.վարժ և արտահայտիչ կարդալ բանաստեղծությունը
2. Ձևակերպել հարցեր ընթերցածի շուրջ
3. բացատրել նորածանոթ բառերը
4. բառ-նախադասությունների կիրառությունը
5.ցուցաբերել հանդուրժողականություն և աջակցել ընկերներին խմբային աշխատանքում

Միջառարկայական կապ՝կերպարվեստ,աշխարհագրություն,հայրենագիտություն

Անհրաժեշտ նյութեր՝ՏՀՏ միջոցներ,գունավոր մատիտներ, Ա4 չափսի թղթեր,գունավոր կպչուն թղթեր,դասագիրք,տետր

Կարողունակություններ՝սովորել սովորելու կարողունակություն
Մշակութային կարողունակություն
Ինքնաճանաչողական և սոցիալական կարողունակություն

Ամփոփում-5րոպե

հին դասի հարցում, տնային աշխատանքի ստուգում

Մտագրոհ **-5րոպե**

Ի՞նչ է կարոտը, ե՞րբևէ պատահել է, որ հայրենիքից հեռու գտնվես, ի՞նչ ես զգացել:

ԽԻԿ համակարգ-10րոպե

Խթանում Ալիսա Կիրակոսյանը հայրենիքից հեռու ինչ զգացողություններ ուներ,դուրս գրել կարոտ արտահայտող բառերը: Բացատրել ինչ են հասկանում նամակ –բանաստեղծություն ասելով:

Իմաստի ընկալում **-10րոպե** Դուրս գրեն հատուկ անուն բառերը,գրեն բանաստեղծության համար ընտրել նոր վերնագիր:

Կշռադատում՝10րոպե

Քառաբաժան մեթոդով ամրապնդել սովորածը

Ինչ զգացի	Ինչ տեսա	Ինչ հասկացա	Ինչ սովորեցի

Անդրադարձ-5րոպե

Հետադարձ կապ՝ **դասի վերաբերյալ տպավորությունները.ինչը մտապահեցի,ինչն էր տպավորիչ,գնահատում,տնային աշխատանքի հանձնարարում:**